


- Պիտի խնդրէի՞նք ձեր տպաւորու-  
թիւնները նուագահանդէսին մասին:  
- Հիմա կը հասնիմ անոր: Նախ  
ըսեմ, թէ Վիեննայի սիմֆոնիք նուա-  
գախումբի ղեկավարը մօտիկ բարեկամս  
է: Ես իրեն անաղարկեցի սիմֆոնիք  
նուագախումբը Պէյրուժ տանիլ եւ  
երգեհոնի հետ համերգ մը կազմակեր-  
պել: Ան իր հաւանութիւնը յայտնեց:  
Սակայն այդ բոլորը մեծ նիւթականի  
հետ կապուած էին: Ես նոյնիսկ պատ-  
րաստ էի Վիեննա մեկնելու, համերգի  
փորձերը այնտեղ կատարելու եւ ապա  
Պէյրուժ դալու: Այս հարցը բնակա-  
նաբար մեծ դժուարութեան հետ  
կապուած է: Իտալիոյ մէջ եւս հնա-  
րաւորութիւն կայ նոյն քայլին դիմե-  
լու աւելի քիչ ծախսով: Բայց երբ ես  
երէկ համերգին ներկայ եղայ, շատ  
լաւ տպաւորութիւն կազմեցի: Թէեւ  
նոր նուագախումբ է, սակայն շատ լաւ  
նուագախումբ է: Հասուն նուագողներ  
ու երաժիշտներ կային: Ես շատ հաւ-  
նեցայ հայ տաղանդաւոր խմբավար  
Յարութ Ֆազլեանը: Ձինք Հայաստա-  
նէն կը ճանչնայի: Ես մեծ ուրախու-  
թեամբ իրենց հետ համերգի կը մաս-  
նակցիմ: Սակայն հարցը այն է, թէ  
ո՞ր պէտք է կազմակերպուի այդ հա-  
մերգը: Մեծ երգեհոնի մը անկայու-  
թիւնը անհրաժեշտ է:

# ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ՊԵՐՃ ՓԱՏԿԱՊԵՄՆԻ ՀԵՏ

ԾԱՐՈՒՄ



ԾԱՐՈՒՄ, 11 ՄԱՐՏ 2000